ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 03 >> դեկտեմբերի 2020թ. N ԱՄՂ/453-20Ա

ք. Արմավիր

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 2-ի N ՍՊ/15.2/33599-2020 հանձնարարականը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բոլոր համայնքներում, տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 18-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու նպատակով

**Որոշում եմ՝**

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին /Ա.Այվազյան/ աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության Արմավիր մարզային գործակալության աշխատակիցներին և համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:
3. Աշխատանքային խմբին /Ա.Այվազյան/ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն ավարտել 2021թվականի հունվարի 20-ին և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ Հ Մաթևոսյան

03.12.2020

X

VERIFIED OCSP 03.12.2020 15:40:07 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզպետի*
***2020թվականի դեկտեմբերի 03—ի***
***ԱՂ/453-Ն-2020 որոշման***

*Աշխատանքային խմբի կազմ*

| | |
|---|---|
| Խմբի ղեկավար՝<br>Ա.Այվազյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ |
| ***Անդամներ՝*** | |
| Մ. Սարիբեկյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ |
| Կ.Պետրոսյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ |
| Ս.Մխիթարյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ |

**Գլխավոր քարտուղար՝** **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 03.12.2020 15:16:50 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023